ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 նոյեմբերի 2023 թվականի N 1923 - Ա

«ՍԼՈՆ-ՖՈՒԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 46.2-րդ կետի «է» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Հայաստանի Հանրապետության Երևան համայնքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պողոտայի հ. 2/3 հասցեում գտնվող՝ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 5089.13 քմ մակերեսով հողամասից «Սլոն-ֆուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն), ժամանցի և մանկական զարգացման կենտրոն կառուցելու նպատակով, առանց մրցույթի, 30 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրել 220.0 քմ մակերեսով հողամաս՝ համաձայն Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ընկերության հետ կնքել կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր)՝ նախատեսելով հետևյալ հիմնական պայմանները.

1) ընկերությունը պարտավորվում է իրականացնել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին կից գտնվող՝ 4869.13 քմ մակերեսով այգու վերակառուցման (արդիականացման) աշխատանքները՝ համաձայն հավելվածի, որոնց իրականացման համար անհրաժեշտ քաղաքաշինական փաստաթղթերը տրամադրվում են պայմանագրի կնքման պահին.

2) ընկերությունը պարտավորվում է պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում պահպանել այգու կանաչ գոտիները, ոռոգման ցանցը՝ կաթիլային համակարգով, ճեմուղիները, լուսավորության համակարգը, կառուցվող և տեղադրվող բոլոր կառույցները, ոչ հիմնական շինությունները և այգու կահավորանքը, ինչպես նաև ապահովել դրանց ընթացիկ նորոգումը և շահագործումը՝ դրանց նշանակությանը համապատասխան.

3) ընկերությունը պարտավոր է իրականացնել նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ սույն կետի 1-ին ենթակետում նշված քաղաքաշինական փաստաթղթերը ստանալուց հետո 18 ամսվա ընթացքում, որոնք նշված ժամկետում չկատարելու (չիրագործելու) դեպքում պայմանագիրը կարող է միակողմանի լուծարվել, որի դեպքում կառուցապատողի կողմից իրականացված ներդրումները փոխհատուցման ենթակա չեն, ինչպես նաև ընկերությունը պարտավորվում է վճարել տուգանք՝ 50 000 000 (հիսուն միլիոն) դրամի չափով.

4) պայմանագրի նոտարական վավերացման և դրանից բխող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը, օրենքով սահմանված համապատասխան վճարներն ու տուրքերը պետք է վճարվեն ընկերության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

09.11.2023

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ